ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ժ.Բարսեղյան

«01» սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

«Տաթև» համայնքի Շինուհայրի միջնակարգ դպրոցի

___Xա___ դասարանի դասղեկ

____Միդա Ծատրյան____

«2022-2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանն բաղկացած է տասնվեց աշակերտից: Դասարանի կրթական մակարդակն ընդհանուր առմամբ գնահատվում է լավ : Կա 5 տղա և 11 աղջիկ:

Դասարանում կան տարբեր ունակությունների աշակերտներ: Դժվար դաստիարակվող երեխա չկա, մեկն Մեյրան Ստեփանյանը գնահատված է Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից: Գնահատվել է որպես թեթև մակարդակի առանձնահատկություն ունեցող աշակերտ :

Դասարանի աղջիկները համարվում են վարքով և ուսմամբ օրինակելի : Բոլոր աշակերտներն հաճախում են դպրոց առանց բացակայությունների:

Չնայած այս ամենի դասարանն կառավարելի է:

2. Ուսման – դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Դասարանի ուսմնա-դաստիարակչական մակարդակը բարձրացնելու նպատակով պետք է ակտիվացնել դպրոց –ծնող կապը: Հաճախակի հրավիրելով ժողովներ, որոնց ժամանակ կքննարկվեն ուսման և դաստիարակության վերաբերվող հարցեր: Եթե լինեն աշակերտներ, որոնք իրենց վատ արարքներով կազդեն ուսման վրա, ապա այդ աշակերտների հետ կկազմակերպվի անհատական զրույցներ իր ծնողի ներկայությամբ: Տարիքային առանձնահատկությունը հաշվի առնելով պետք է երեխաների մոտ ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ, հարգանք ընկերոջ և մեծահասակների նկատմամբ, առողջ ապրելակերպի կիրառում և այլն:Շատ մեծ և կարևոր է կոլեկտիվ դաստիարակությունը:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն՝

Այս առումով երեխաների մոտ պետք է ձևավորել հարգանք և սեր հոգևոր արժեքների նկատմամբ:Կարելի է կազմակերպել այցելություն մոտակա որևէ հոգևոր մշակութային կենտրոն(Հին Շինուհայր), որտեղ աշակերտները տեղում կծանոթանան հայ մշակույթին: Կազմակերպել շաբաթօրյակ այդ մշակութային կենտրոնի տարածքում:

3.2Գեղագիտական դաստիարակություն՝

Արդի ժամանակաշրջանում տեղեկատվական խոսքը բացասաբար է անդրադառնում դեռահասների ձևավորման վրա: Այդ պատճառով պետք է ցուցադրել ֆիլմեր , կազմակերպել այցելություններ դեպի թանգարաններ կամ պատկերասրահներ(Գորիս): Որտեղ երեխաներին կներկայացվի հին և արդի մշակույթի գեղագիտական կողմերը և կբացատրենք թե դա ինչ ազդեցություն է ունենում մարդկանց վրա: Կազմակերպել քննարկում և լսել երեխաների կարծիքները և այդ հիմքի վրա կատարել ավելացումներ և շտկումներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն՝

Սերը առ հայրենիք: Պետք է աշակերտների մոտ ձևավորել հայրենասիրություն, նվիրվածություն , անձնազոհություն և նմանատիպ գաղափարներ : Յուրաքանչյուր հասկացության վերաբերյալ տալ բացատրություն և լսել աշակերտներին թե ինչ գաղափար են կազմել այս հասկացության վերաբերյալ: Կարևոր է նաև հետաքրքրություն առաջացնել այս գաղափարի շուրջ:

3.4 Ֆիզիկական դաստիարակչություն՝

Բացատրել աշակերտներին որ յուրաքանչյուր մարդ պետք է մասնակցի ցանացած ֆիզիկական մարմնավարժությունների: Նաև տալ պատկերացում ու հստակեցնել թե ինչու է հաճախ հնչում «Առողջ մարմնում , առողջ հոգի հասկացությունն» և ինչ կարևորություն ունի մեր կյանքում: Առավոտյան կատարել վարժանքներ , որը կնպաստի նրանց ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն՝

Հաճախակի կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ (դասարանի, դպրոցամերձ տարածքի մաքրում, դպրոցի մաքրուհիների օգնում) : Կարելի է նաև աշակերտներին ներգրավել դասարանական և ներդպրոցական միջոցառումներին աշխատանքներին: Նույն ժամանակ կբացատրվի աշխատանքային և անվտանգության կանոնները:

3.6 Բնապահպանական դաստիարակություն՝

Կազմակերպել էքսկուրյաներ և շրջագայումներ : Այդ ընթացքու օրինակի միջոցով ցույց տալ թե ինչ կարևոր դեր ունի մեզ համար բնությունը: Եվ հստակ նշել, որ բնության բացակայությունը ինչ բացասական հետևանքներ կուննենան մեր կյանքում կամ մարդկության վրա: Երեխաների մոտ ձևավորել հարգանք դեպի բնությունը : Նշել , որ կլիմայական փոփոխության պատճառով մեզ մոտ Հայաստանում ջերմաստիճանը բարձրացել է 1 աստիճանով:

4 . Դպրոց - ընտանիք կապը

Պետք է կազմակերպել դասախոսություն ընտանիք հասկացողության վերաբերյալ: Նշել որ ամուր ընտանիքը պետության հենասյունն է: Հաճախակի հանդիպում կազմակերպել ծնողների հետ և պարզաբանել թե ինչ միջոցներ են կիրառվում երեխային դաստիարակելու ժամանակ:Բացատրել աշակերտներին, որ ընտանեկան խնդիրները չպետք է տեղափոխել դպրոց, որ կարող է վատ ազդեցություն թողնել կրթության և վարքի վրա:Միևնույն ժամանակ հասկացնել, որ պետք է սերտորեն կապված լինի դպրոցն ու ընտանիքը: Քանի որ ամեն ինչի հիմքն հանդիսանում է առողջ ընտանիքը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	«Գիտելիքի օր» թեմայով զրույց քննարկում	սեպտեմբեր	
II	« Համաճարակային իրավիճակ» COVID 19	սեպտեմբեր	
III	Գիտելիքը հզոր զենք է՝ թեմայով զրույց	սեպտեմբեր	
IV	Հայաստանի երրորդ հանրապետություն թեմայով քննարկում	սեպտեմբեր	
V	Մեր հերոսները թեմայի վերաբերյալ կազմակերպել այցելություն հուշարձան	հոկտեմբեր	
VI	Զրույց՝ << Առողջ մարմնում առողջ հոգի>>:	հոկտեմբեր	
VII	Ուսուցչի առաքելությունը մեր կյանքում: Թեմայով քննարկում	հոկտեմբեր	
VIII	Ճանապարհային երթևեկության կանոնները: Զրույց:	հոկտեմբեր	
IX	Շրջակա միջավայրի պահպանումը: Շաբաթորյակի կազմակերպում: Հանրօգուտ աշխատանք:	նոյեմբեր	
X	Ինչպես անցկացնել ազատ ժամանակը: Զրուցել և լսել աշակերտների կարծիքը:	նոյեմբեր	
XI	Ինչ է հանդուրժողականությունը: Դասախոսության կազմակերպում:	նոյեմբեր	
XII	Կոնֆլիկտների հաղթահարման եղանակները: Թեմայի վերաբերյալ բերել օրինակներ:	նոյեմբեր	
XIII	Իմ երազանքները, եթե ես լինեի... Շարադրություն / դասարանական/	դեկտեմբեր	
XIV	Համաշխարհայնացումն և դրա հետևանքները: Հանձնարարել ստեղծել սահիկաշար թեմայի վերաբերյալ	դեկտեմբեր	
XV	Երկրաշարժի աղետալի հետևանքների մասին: Ներկայացնել հայաստանում տեղի ունեցած բնական և արհեստածին աղետները:	դեկտեմբեր	
XVI	Բնական աղետներ: Զրույցի միջոցով բացատրել բնական և արհեստածին աղետների տարբերությունները	դեկտեմբեր	
XVII	Ամանոր և Սուրբ ծնունդ: Կազմակերպել դիմակահանդես:	հունվար	
XVIII	Հոգու կրթություն և մտքի թռիչք: Թեմայով քննարկում:	հունվար	
XIX	Հայկական տոներն ու ավանդույթները; Հրավիրել մասնագետ թեման ներկայացնելու համար:	հունվար	
XX	Հայոց բանակ: Միջոցառման կազմակերպում:	փետրվար	
XXI	Վարվեցողության կանոնները: Թեմայով քննարկում:	փետրվար	
XXII	Ձմեռային սպորտաձևեր: Ներկայացնել մի քանի սպորտաձևեր և մարզների:	փետրվար	
XXIII	Ձնհալք թեմայով զրույց:	փետրվար	
XXIV	Հայ նշանավոր գործիչներ: Անհատական հավաքել տեղեկություններ և կազմել պատի թերթ:	մարտ	
XXV	Գարնան սկիզբը մեր գյուղում և գյուղացու կյանքում : Քննարկում:	մարտ	
XXVI	Մայրը որպես գեղեցկության խորհրդանիշ: Ում եք	մարտ	

	համարում գեղեցիկ: Թեմայով զրույց		
XXVII	Գեղեցիկը մարդու կյանքում: Բերել օրինակներ գեղեցիկի վերաբերյալ:	մարտ	
XXVIII	Մեր գյուղը թեմայով քննարկում:	ապրիլ	
XXIX	Կատակ և ծիծաղ: Փոքրիկ բեմականացում:	ապրիլ	
XXX	Սիրո և գեղեցկության տոն:Բացիկների ստեղծում և տարածում:	ապրիլ	
XXXI	Խաղախությունն ընդեմ պատերազմի: Թեմայի վերաբերյալ ֆիլմի դիտում:	ապրիլ	
XXXII	Արյունոտ ապրիլ: Պատի թերթի կազմում	մայիս	
XXXIII	Աշխատանքի դերը մարդու կյանքում: Զրույց	մայիս	
XXXIV	Ճանաչենք մեր հայրենիքը:/ Ինչ տվեց մեզ դպրոցը: Թեմայով զրույց:	մայիս	